

Հաստատված է
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ
 ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)
 Ամբիոնի պետի ժ/պ _____ Հ.Խաչատրյան
 31.08.2020թ.

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Միջազգային քրեական իրավունք
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Մագիստրատուրա, առկա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՍԲԻՈՆ	Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն E-mail: qreakan@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Ա.Ֆիդանյան (ի. գ. թ.) E-mail: a.fidanyan@interpol.am
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՍՅԱԿ	1-ին կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	մագիստրատուրա

ԿՐԵԴԻՏՆԵՐ	3 (երեք)
ԴԱՍԱԺԱՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	<p>«Միջազգային քրեական իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 28 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք, 58 ժամ ինքնուրույն աշխատանք:</p> <p>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:</p>
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական իրավունք», «Միջազգային իրավունք» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են միջազգային քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդները, սկզբունքներն ու աղբյուրները, միջազգային և միջազգային բնույթի հանցագործությունները միջազգային քրեական իրավունքում:

<p>ՆՊԱՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐ/ՆԵՐ</p>	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ միջազգային քրեական իրավունքի հասկացության, առարկայի, մեթոդների, սկզբունքների ու աղբյուրների, սովորողներին ներկայացնել միջազգային հանցագործություններն և միջազգային բնույթի հանցագործությունների վերաբերյալ:</p> <p>Դասընթացի խնդիրներն են.</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել միջազգային քրեական իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդները, • ներկայացնել միջազգային քրեական իրավունքի սկզբունքները, • ներկայացնել միջազգային քրեական իրավունքի աղբյուրները, • ուսումնասիրել հանցանք կատարած անձանց հանձնելու իրավական կարգավորումը միջազգային քրեական իրավունքում, • պարզաբանել Հռոմի միջազգային քրեական դատարանի իրավասությունները, ընդդատյա հանցագործությունները, կառուցվածքը, կիրառվող իրավունքը, • ներկայացնել միջազգային հանցագործությունները, • ուսումնասիրել միջազգային բնույթի հանցագործությունները նախատեսող միջազգային կոնվենցիաները՝ ըստ հանցագործության օբյեկտների:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p><i>Կարողանա՝</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. սահմանել միջազգային քրեական իրավունքի հասկացությունը, 2. բնութագրել միջազգային քրեական իրավունքի առարկան, 3. թվարկել միջազգային քրեական իրավունքի մեթոդները, 4. պարզաբանել միջազգային քրեական իրավունքի սկզբունքների բովանդակությունը, 5. մատնանշել միջազգային քրեական իրավունքի աղբյուրները, 6. ներկայացված կոնկրետ իրավիճակում պարզել հանցանք կատարած անձանց հանձնելու միջազգային իրավական հիմքերի առկայությունը կամ բացակայությունը, 7. սահմանել Հռոմի միջազգային քրեական դատարանի իրավասությունները, 8. թվարկել Հռոմի միջազգային քրեական դատարանին ընդդատյա հանցագործությունները, 9. ներկայացնել Հռոմի միջազգային քրեական դատարանի կառուցվածքը, 10. բնութագրել միջազգային հանցագործությունները, 11. բնութագրել միջազգային բնույթի հանցագործությունները, 12. մատնանշել միջազգային բնույթի հանցագործությունները նախատեսող միջազգային կոնվենցիաները՝ ըստ հանցագործության օբյեկտների:

<p>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p> <p>Հիմնական</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսությունները 2. Գ.Թ.Գրիգորյան, Միջազգային քրեական իրավունքը փաստաթղթերում, Ուսումնական ձեռնարկ, 2 մասով, Լիմուշ, Երևան, 2011, 3. Международное право: Учебник. отв. ред. Ю.М.Колосов, Э.С.Кривчикова – М.: Межд. отношения. 2003. 4. Международное право: Учебник для вузов. – 3-е изд., изм. и дополн. / Под ред. Г.В. Игнатенко, О.И. Тиунова. – М.: НОРМА, 2005.
--	--

	<p>5. Международное публичное право: Учебник. Издание 2-е, перераб. и дополн. / Под ред. К.А. Бекяшева. – М.: ПБОЮЛ Грачев С.М., 2002.</p> <p>6. Костенко Н.И. Международная уголовная юстиция. Проблемы развития. – М.: РКонсульт, 2002.</p> <p>7. Кибальник А.Г. Введение в международное уголовное право. – Ставрополь: Ставропольсервисшкола, 2001.</p>
Լրացուցիչ	<ol style="list-style-type: none"> 1. Грицаев С.А. Международная уголовная ответственность физических лиц: История и современность. Учебное пособие. – Белгород: ООНИ и РИД БелЮИ МВД России, 2005. 2. Зимин В.П., Зубов И.Н. Международное сотрудничество в области борьбы с преступностью и охраны общественного порядка.- М., 1993. 3. Колибаб К.Е. Институт передачи осужденных для отбывания наказания в другие государства//Журнал Российского права. 1999. №5-6. 4. Лукашук И.И. Международное уголовное право и правовая система Российской Федерации // Журнал российского права. 1997. № 10. 5. Лукашук И.И., Наумов А.В. Выдача обвиняемых и осужденных в международном уголовном праве: Учебно-практическое пособие. - М., 1998. 6. Международное уголовное право / под. ред. В.Н.Кудрявцев. - М., 1995. 7. Панов В.П. Сотрудничество государств в борьбе с международными преступлениями. – М., 1993. 8. Панов В.П. Международное уголовное право. – М., 1997. 9. Васильев Ю.Г. Институт выдачи преступников (экстрадиции) в современном международном праве – М., 2003. 10. Милинчук В.В. Институт взаимной правовой помощи по уголовным делам. Действующая практика и перспективы развития. – М.: Юрлитинформ, 2001. 11. Трикоз Е.Н. Начало деятельности Международного уголовного суда: состояние и перспективы //Журнал российского права 2005. № 3. 12. Котляров И.И. Международное право и вооруженные конфликты. Монография. М.: Московский университет МВД России, 2003.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱՂԻԴՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	<p>Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1)</p> <p>Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2)</p> <p>Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն)</p>		
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով	Միջանկյալ գնահատման միավոր
	18-20	Գերազանց	Միջանկյալ գնահատման միավոր
	13-17	Լավ	Հարց 1 Հարց 2
	8-12	Բավարար	2 միավոր 2 միավոր
	0-7	Անբավարար	
	0	Չներկայացած	

<p>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ</p>	<p>Մովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (20 միավոր) առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է սովորողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա:</p> <p>Մովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Մտուգված» կամ «Չստուգված»:</p> <p>Մովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ուստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևավոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով:</p> <p>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների:</p> <p>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները:</p> <p>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:</p>
<p>ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	
<p>Ներկայություն</p> <p>Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ</p>	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:</p> <p>Մովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Մովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p> <p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p>

Ինքնուրույն և գործնական աշխատանքներ	<p>Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:</p> <p>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>
--	--

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 <i>Միջազգային քրեական իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդները</i> (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Միջազգային քրեական իրավունքի հասկացությունը 2. Միջազգային քրեական իրավունքի առարկան 3. Միջազգային քրեական իրավունքի մեթոդները 	<p>Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը նյութի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:</p>

Թեմա 2 <i>Միջազգային քրեական իրավունքի սկզբունքները</i> (4 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Միջազգային քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքները 2. Անձնական պատասխանատվության սկզբունքը 3. Nullum crimen sine lege և nullum poena sine lege սկզբունքները 4. Պաշտոնեական կարգավիճակի կամ հրամանի վկայակոչման անթույլատրելիության սկզբունքը 5. Ne bis in idem սկզբունքը 	<p>Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 2-5 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Ըստ նախապես տրված հանձնարարության՝ սովորողները համաշխարհային պրակտիկայից առանձնացնում են նշված սկզբունքների պահպանման կամ խախտման օրինակներ:</p>

Թեմա 3 <i>Միջազգային քրեական իրավունքի աղբյուրները</i> (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Միջազգային պայմանագրերը որպես միջազգային քրեական իրավունքի աղբյուր, 2. Իրավունքի սովորութային նորմերը որպես միջազգային քրեական իրավունքի աղբյուր, 3. Դատական նախադեպը որպես միջազգային քրեական իրավունքի աղբյուր, 4. Միջազգային կազմակերպությունների որոշումները որպես միջազգային քրեական իրավունքի աղբյուր, 5. Ազգային օրենքները որպես միջազգային քրեական իրավունքի աղբյուր, 6. Միջազգային քրեական իրավունքի դոկտրինալ աղբյուրները: 	<p>Հարցեր 1-6 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարց 1 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, դասախոսի կողմից նախապես ներկայացված հանձնարարությունների հիման վրա դուրս են գրում միջազգային քրեական իրավունքի աղբյուրի երեքական օրինակ:</p>

Թեմա 4
Հանցանք կատարած անձանց հանձնելը
(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Հանցանք կատարած անձանց հանձնելու անգլոամերիկյան իրավական համակարգը</p> <p>2. Հանցանք կատարած անձանց հանձնելու եվրոպական-մայրցամաքային իրավական համակարգը</p> <p>3. Պատիժը կրելու համար դատապարտյալների փոխանցումը</p>	<p>Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-2. Ինքնուրույն աշխատանք. Սովորողները համաշխարհային պրակտիկայից առանձնացնում են հանցանք կատարած անձի հանձնելու իրավիճակներ և հիմնավորում դրանցում միջազգային քրեական իրավունքի նորմերի խախտումները կամ պահպանումը: Հարցեր 1-3. Սեմինար պարապմունք. Սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները և կազմակերպվում է դրանց խմբային քննարկում:</p>

Թեմա 5
Հոռմի միջազգային քրեական դատարանը
(2 ժամ դասախոսություն)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Հոռմի միջազգային քրեական դատարանի կառուցվածքը</p> <p>2. Հոռմի միջազգային քրեական դատարանին ընդդատյա հանցագործությունները</p> <p>3. Հոռմի միջազգային քրեական դատարանի կողմից կիրառվող իրավունքը</p> <p>4. Հոռմի միջազգային քրեական դատարանի կողմից նշանակվող պատիժը</p>	<p>Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն՝ շեշտադրումը կատարելով առավել խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, պատրաստում են զեկույցներ՝ Հոռմի միջազգային քրեական դատարանի կողմից քննված գործերի վերլուծությամբ:</p>

Թեմա 6
Միջազգային հանցագործություններ
(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
---------------	--

<ol style="list-style-type: none"> 1. Խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ, 2. Ռազմական հանցագործություններ, 3. Մարդկության դեմ ուղղված հանցագործություններ: 	<p>Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք՝ սովորողները ըստ խմբերի պատրաստում են համաշխարհային պրակտիկայից վերցված մեկական հանցագործության դեպք և կատարում դրա իրավական գնահատում:</p> <p>Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք: Սովորողները քննարկում են միմյանց կողմից պատրաստված իրավիճակները, փորձում մատնանշել առկա թերությունները ու սխալները:</p>
--	---

<p align="center">Թեմա 7 <i>Մարդու թրաֆիքինգը և շահագործումը միջազգային քրեական իրավունքում</i> (2 ժամ դասախոսություն)</p>	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Մարդու թրաֆիքինգը և շահագործումը նախատեսող միջազգային կոնվենցիաները, 2. Շահագործման ձևերի բնորոշումը միջազգային քրեական իրավունքում 3. Միջազգային համագործակցությունը մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարում 	<p>Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը նյութի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար, վերլուծում են միջազգային քրեական իրավունքում և ազգային քրեական իրավունքում խնդրո առարկայի վերաբերյալ առկա իրավակարգավորումների համապատասխանությունը:</p>

<p align="center">Թեմա 8 <i>Միջազգային բնույթի տնտեսական հանցագործություններ</i> (2 ժամ դասախոսություն)</p>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Միջազգային բնույթի տնտեսական հանցագործությունները նախատեսող միջազգային կոնվենցիաները, 2. Փողերի լվացման քրեականացումը միջազգային կոնվենցիաներով 3. Միջազգային համագործակցությունը տնտեսական հանցագործությունների դեմ պայքարում: 	<p>Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Ըստ նախապես տրված հանձնարարության՝ սովորողները խմբերով պատրաստում են զեկույցներ՝ նախապես տրված թեմաներով:</p>

<p align="center">Թեմա 9 <i>Կոռուպցիոն հանցագործությունները միջազգային քրեական իրավունքում</i> (2 ժամ դասախոսություն)</p>	
--	--

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Կոռուպցիոն հանցագործությունները նախատեսող միջազգային կոնվենցիաները, 2. Կոռուպցիոն հանցագործությունների քրեականացումը միջազգային քրեական իրավունքում, 3. Միջազգային համագործակցությունը կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում:	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն: Հարց 2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը նյութի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար, վերլուծում են միջազգային քրեական իրավունքում և ազգային քրեական իրավունքում խնդրո առարկայի վերաբերյալ առկա իրավակարգավորումների համապատասխանությունը:

Թեմա 10 Հասարակական անվտանգության դեմ ուղղված միջազգային բնույթի հանցագործություններ (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները նախատեսող միջազգային կոնվենցիաները, 2. Ահաբեկչության քրեականացումը միջազգային կոնվենցիաներով, 3. Պատանդներ վերցնելու քրեականացումը միջազգային կոնվենցիաներով, 4. Միջազգային համագործակցությունը հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարում:	Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-2. Ինքնուրույն աշխատանք. Սովորողները ծանոթանում են գրականությանը նյութի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար, վերլուծում են միջազգային քրեական իրավունքում և ազգային քրեական իրավունքում խնդրո առարկայի վերաբերյալ առկա իրավակարգավորումների համապատասխանությունը:

Թեմա 11 Բնակչության առողջության դեմ ուղղված միջազգային բնույթի հանցագործություններ (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները նախատեսող միջազգային կոնվենցիաները, 2. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության քրեականացումը միջազգային կոնվենցիաներով, 3. Միջազգային համագործակցությունը բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարում:	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն՝ շեշտադրումը կատարելով առավել խնդրահարույց հարցերի վրա: Հարց 2– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, պատրաստում են զեկույցներ՝ նախապես տրված թեմաներով:

Թեմա 12 Ժողովուրդների մշակութային ժառանգության դեմ ուղղված ոստնձգությունները միջազգային քրեական իրավունքում (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն

<p>1. Ժողովուրդների մշակութային ժառանգության դեմ ուղղված հանցագործությունները նախատեսող միջազգային կոնվենցիաները,</p> <p>2. Միջազգային համագործակցությունը ժողովուրդների մշակութային ժառանգության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարում:</p>	<p>Հարցեր 1-2 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարց 2– ինքուրույն աշխատանք՝ սովորողները ծանոթանում են գրականությանը՝ դասախոսության ընթացքում ներկայացված նյութը յուրացնելու նպատակով:</p>
---	--

Հարցաշար

«Միջազգային քրեական իրավունք» առարկայի առաջին միջանկյալ քննության

1. Միջազգային քրեական իրավունքի հասկացությունը
2. Միջազգային քրեական իրավունքի առարկան
3. Միջազգային քրեական իրավունքի մեթոդները
4. Միջազգային քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքները
5. Անձնական պատասխանատվության սկզբունքը
6. Nullum crimen sine lege և nullum poena sine lege սկզբունքները
7. Պաշտոնեական կարգավիճակի կամ հրամանի վկայակոչման անթույլատրելիության սկզբունքը
8. Ne bis in idem սկզբունքը
9. Միջազգային պայմանագրերը և իրավունքի սովորութային նորմերը որպես միջազգային քրեական իրավունքի աղբյուր,
10. Դատական նախադեպը որպես միջազգային քրեական իրավունքի աղբյուր
11. Հանցանք կատարած անձանց հանձնելու անգլոամերիկյան և եվրոպական-մայրցամաքային համակարգերի բնութագիրը
12. Հանձնումը մերժելու հիմքերը միջազգային քրեական իրավունքում
13. Պատժի կատարման համար դատապարտյալների հանձնումը
14. Միջազգային քրեական դատարանին ընդդատյա հանցագործությունները
15. Միջազգային քրեական դատարանում վարույթի համար գործի անընդունելիության հիմքերը, միջազգային քրեական դատարանի կողմից կիրառվող իրավունքը,
16. Միջազգային քրեական դատարանի կառուցվածքը, լեզուները, կիրառվող պատժամիջոցները

Հարցաշար

«Միջազգային քրեական իրավունք» առարկայի երկրորդ միջանկյալ քննության

1. Միջազգային հանցագործությունների բնորոշումն ըստ Նյուրբերգի տրիբունալի կանոնադրության և Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի
2. Ցեղասպանության բնորոշումն ըստ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին Կոնվենցիայի
3. Ապարտեյդի հանցագործությունն բնորոշումն ըստ Ապարտեյդի հանցագործությունն արգելելու և պատժելու մասին Կոնվենցիայի
4. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, խափանման և դրա համար պատժի մասին Արձանագրության նպատակները և առանձնահատկությունները
5. Թրաֆիքինգի և շահագործման և հարակից արարքների բնորոշումն ըստ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիայի
6. Իրավաբանական անձանց պատասխանատվությունը և թրաֆիքինգի պատժելիությունը ըստ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիայի
7. Հարկադիր աշխատանքի բնորոշումն ըստ Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին Կոնվենցիայի
8. Ստրկության ու ստրկությանը նմանվող վիճակի բնորոշումը
9. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիայի նպատակներն ու առանձնահատկությունները
10. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունները
11. Եկամուտների լվացման հետ կապված հանցագործությունները ըստ Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին 1990թ. Կոնվենցիայի
12. Կոռուպցիայի լայն և նեղ բնորոշումները
13. Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի Կոնվենցիայով քրեականացում նախատեսող արարքները
14. ՄԱԿ-ի 2003թ. Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայով քրեականացում նախատեսող արարքները

Հարցաշար

«Միջազգային քրեական իրավունք» առարկայի կիսամյակային քննության

1. Միջազգային քրեական իրավունքի հասկացությունը
2. Միջազգային քրեական իրավունքի առարկան
3. Միջազգային քրեական իրավունքի մեթոդները
4. Միջազգային քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքները
5. Անձնական պատասխանատվության սկզբունքը
6. Nullum crimen sine lege և nullum poena sine lege սկզբունքները
7. Պաշտոնեական կարգավիճակի կամ հրամանի վկայակոչման անթույլատրելիության սկզբունքը
8. Ne bis in idem սկզբունքը
9. Միջազգային պայմանագրերը և իրավունքի սովորութային նորմերը որպես միջազգային քրեական իրավունքի աղբյուր,
10. Դատական նախադեպը որպես միջազգային քրեական իրավունքի աղբյուր
11. Հանցանք կատարած անձանց հանձնելու անգլոամերիկյան և եվրոպական-մայրցամաքային համակարգերի բնութագիրը
12. Հանձնումը մերժելու հիմքերը միջազգային քրեական իրավունքում
13. Պատժի կատարման համար դատապարտյալների հանձնումը
14. Միջազգային քրեական դատարանին ընդդատյա հանցագործությունները
15. Միջազգային քրեական դատարանում վարույթի համար գործի անընդունելիության հիմքերը, միջազգային քրեական դատարանի կողմից կիրառվող իրավունքը,
16. Միջազգային քրեական դատարանի կառուցվածքը, լեզուները, կիրառվող պատժամիջոցները

17. Միջազգային հանցագործությունների բնորոշումն ըստ Նյուրբերգի տրիբունալի կանոնադրության և Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի,
18. Ապարտեիդի հանցագործությունբնորոշումն ըստԱպարտեիդի հանցագործությունն արգելելու և պատժելու մասինԿոնվենցիայի
19. Թրաֆիքինգի սահմանման իրավապաշտպան և տարածաշրջանային մոտեցումները,
20. Թրաֆիքինգի սահմանման աշխատանքի շահագործման, բարոյական և մարդու իրավունքների մոտեցումները,
21. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի Կոնվենցիայի ընդհանուր բնութագիրը,
22. Հարկադիր աշխատանքի բնորոշումըՀարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին1930թ. Կոնվենցիայում
23. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, խափանման և դրա համար պատժի մասին Արձանագրության նպատակը և առանձնահատկությունները,
24. ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, խափանման և դրա համար պատժի մասին Արձանագրության հիմնական դրույթները
25. Ստրկության ու ստրկությանը նմանվող վիճակի բնորոշումը,
26. Եվրոպայի խորհուրդի 2005թ. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Կոնվենցիայի նպատակը և առանձնահատկությունները,
27. Եվրոպայի խորհուրդի 2005թ. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունները,
28. Փողերի լվացման բնորոշումըՀանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին1990թ. Կոնվենցիայում,
29. Կոռուպցիայի բնորոշումները լայն և նեղ իմաստներով,
30. Կոռուպցիայի մասին քրեական իրավունքիԿոնվենցիայով քրեականացում նախատեսող արարքները,
31. Կոռուպցիայի մասին քրեական իրավունքիԿոնվենցիայի 2003թ. մայիսի 15-ի լրացուցիչ արձանագրությամբ քրեականացում նախատեսող արարքները,
32. ՄԱԿ-ի 2003թ. Կոռուպցիայի դեմ կոնվենցիայով քրեականացում նախատեսող արարքները,
33. Թմրամիջոցների մասին 1961թ. միասնական կոնվենցիայի ընդհանուր բնութագիրը,
34. Հոգեներգործուն նյութերի մասին 1971թ. Կոնվենցիայի ընդհանուր բնութագիրը,
35. Մշակութային արժեքների հասկացությունը ըստ Ջինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954թ. Կոնվենցիայի
36. Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին 1970թ. Կոնվենցիայի ընդհանուր բնութագիրը